

Փետր. 27, 1974

Արժանաշնորհ  
Տ. Բարի Բինյ. Մէթճեան  
Այցելու Հովիւ  
Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ  
Ռէյսին, Ռւիսթանսըն.

Արժշ. Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Փետր. 15, 1974 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Յունար 20ին գումարուած Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ համայնքի ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը:

Սակայն ծխական ժողովի ատենագրութեան մէջ չէ յիշուած ծխական Խորհուրդի ընտրութեան մասին, իսկ Առաջնորդարանի տպագրեալ տեղեկագրին մէջ արձանագրուած է միայն երեք անդամներու անունը:

Որպէս զի Առաջնորդ Սրբազան Հայրը վաւերացնէ ծխական Խորհուրդի ընտրութիւնը՝ անհրաժեշտ է որ փութով Առաջնորդարան ղրկէք հետեւեալ նիւթերը.

- ծխական Խորհուրդի նորընտիր անդամները քանիակա՞ն քուէ ըստացած են.
- Առաջնորդարանի տպագրեալ հաշուեկշիռը --որմէ երկու օրինակ կը ներփակենք--:

Հաճեցէք կարեւորութեամբ ընթացք տալ նորին Սրբազանութեան սոյն յանձնարարութեան:

Խորին յարգանօք

Նուպար Քիւփէլեան  
Քարտուղար

Օրինակ՝ Տիար Ճորճ Սթիւոֆի  
Ատենապետ Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդի